

ք. Երևան

« 30 » դեկտեմբերի 2010թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, գործելով ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից՝ «Յուքում» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Եսայանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### **1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատուցել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **ինտերնետ ծառայությունները** (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

1.2 Ծառայության մատուցումն սկսվում է 2011 թվականի հունվարից, և իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Սույն պայմանագիրը կգործի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

### **2. Ծառայության գինը և վճարման կարգը**

2.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ծառայության գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 1996.56 հազար դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության (ձև N 4) հիման վրա 10 բանկային օրվա ընթացքում կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցին համապատասխան:

### **3. Այլ պայմաններ**

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի միջև պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում են Պետական գնումների գործակալության և Վաճառողի միջև 2010 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված N ՊԾՁԲ-10/7-3 գնման նախնական պայմանագրով հաստատված օրինակելի պայմանագրի դրույթները:

3.3 Այն դեպքում, երբ ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվում ֆինանսական միջոցներ, ապա գնման պայմանագիրը լուծվում է:

3.3 Մույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 7 էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003150, 900011003168  
ՀՎՀՀ 02578338

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Յուրոմ» ՍՊԸ  
ք. Երևան, Տերյան 19, բն.4  
«Էյչ-Էս-Բի-Սի» Բանկ Հայաստան» ՓԲԸ  
Հ/Հ 001-264993-001  
ՀՎՀՀ 00024873

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ